

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 31-ին, կիրակի.— Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Քառասնօրյա պահեցողության, հոգևոր վերածննդի, ապաշխարության, աղոթքի ու զղջումի, և ապա Ավագ շաբաթի հոգեպարար ու սրտառուչ արարողություններից հետո, մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությամբ, հավատացյալ հոգիները լցվեցին զարթոնքի անշեջ լույսով:

Զատկի տոնը քրիստոնյա աշխարհի մեծագույն տոներից է, որ ծաղկազարդ գարնանը նշվում է մեծ շուքով ու հանդիսավորությամբ:

Ավելի քան 1700 տարիներ շարունակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ավետաբեր զանգերի ղողանջները ազդարարում են Հիսուս Քրիստոսի Հարության ուրախարար լուրը՝ **«Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով, մեզ զկեանս պարգևեաց»:**

Վաղ առավոտից Մայր տաճարը լեփ-լեցուն է հավատացյալ բազմությամբ: Զատկի մեծ տոնի առթիվ բազմաթիվ ուխտավորներ են եկել Մայր Հայրենիքից, հեռավոր շրջաններից և սփյուռքից:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը զգեստավորված, եկեղեցական թափորով, զանգերի քաղցրահունչ ղողանջների ներքո, Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու օրվա հանդիսավոր պատարագը:

Ս. Գայանե վանքի արական երգչախմբի գեղեցիկ կատարմամբ, «Հրաշափառ»-ի երգեցողությամբ Նորին Սրբությունը մուտք է գործում Մայր տաճար: Հնչում է «Կոմիտասյան պատարագ»-ը:

Երևանի հեռուստատեսությամբ ուղիղ եթերով, ողջ Հայաստանի տարածքում սփռվում է Զատկի գեղեցիկ արարողությունը:

Զատկական ս. պատարագին ներկա էին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, Նախարարաց խորհրդի նախագահ տիար Վազգեն Մանուկյանը և հայրենի կառավարության այլ պաշտոնատար անձինք:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը, ավետելով Քրիստոսի հրաշափառ Հարության լուրը, շնորհավորում է բովանդակ հայ ժողովրդի Զատիկը՝ որ ի Հայաստան և որ ի Սփյուռս աշխարհի, և օրվա մեծ խորհրդի առթիվ ոգեշունչ քարոզ խոսում:

Ս. պատարագի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը կրկին եկեղեցական հանդիսավոր թափորով առաջնորդվում է Վեհարան՝ իր ճանապարհին օրհնելով հավատավոր ժողովրդին:

Վեհարանում Նորին Սրբությունը մեկ անգամ ևս օրհնում է ներկաներին: Այնուհետև թափորի մասնակիցները աջհամբույրով շնորհավորում են Հայոց Հայրապետին՝ Զատկական տոնի առթիվ:

Նույն օրը Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, Նախարարաց խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, Մայրավանքի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և ափյուռքահայ ուխտավորներ:

Տոնական սեղանի շուրջ փոխանակվեցին շնորհավորանքի և բարեմաղթության ջերմ խոսքեր: Վերջում Հայոց Հայրապետը մեկ անգամ ևս շնորհավորելով ներկաներին օրվա մեծ տոնի կապակցությամբ, իր օրհնությունը բաշխեց բոլորին:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց». «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»: